


Իսկ արար պատմիչն Աբու'լ-Մէհասին հետեւեալը կը գրէ Սիսուանի թագաւորութեան կործանուելուն վրայ .

« Երեք ամիս պաշարումէ ետքը՝ այս տարի անուեցաւ երկրին մայրաքաղաքը՝ Սիս , Հալէբի կառավարիչ Մէրդինցի Ըշրկթիմուր ամիրային ձեռքովը . եւ Հայոց պետութիւնը կատարելապէս կործանուեցաւ : Փա՛ռք Աստուծոյ, Այս լուրը տարածուեցաւ, եւ (Մէլիք էլ-) Աշրաֆ այս նշանաւոր յաղթութեան համար մեծապէս ուրախացաւ » (1) :



Սիս — Sis.

Ուրիշ արաբացի մըն ալ, Մակրիզի, Եգիպտոսի հարստութեանց պատմութեան մէջ հետեւեալ նկարագրութիւնը կընէ .

« Զիլկադէ ամսի 19-ին (= 22 ապրիլի) աղանի մը հասաւ եւ Սիս յաղթութեան բարի լուրը բերաւ (Եգիպտոս) : Աղանին զրկուած էր Սուրիայի կառավարիչ Բէյդէմուր ամիրայէն : Կառավարչին կողմէն զրկուած սուրհանդակն հասաւ յաջորդ օրը , եւ հաստատեց այդ լուրը : Իրրեւ ուրա-

(1) Փայլուն աստղեր՝ Եգիպտոսի եւ Կանիսի քաղաւորաց մեջ, հս. Կ. քրք. 199 թ, արաբերէն ձեռագիր Bibl. Nat.-ի, քիւ 1783: